ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
02.05.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ»
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ»
1.2 ՀՎՀՀ-ն		02693369
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂ. 6
1.4 Պետական գրանցման համարը		211.171.1062069
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2019-03-05
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10123456
1.7 Պաշտոնական ինտերնետային կայք		www.aina.am
1.8 Էլեկտրոնային փոստը		zaruhiselimyan@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՇՈՂԵՐ	ԲԱՐՍԵՂՅԱՆ	Գործադիր տնօրեն
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Համակարգել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրության ոլորտը,		
մշակում է գյուղատնտեսության ապահովագրության ստանդարտ պրոդուկտներ, որոնք միասնական են և պարտադիր բոլոր անդամ ապահովագրական ընկերությունների համար,		
մշակում և համակարգում է Գործակալության կողմից մշակած գյուղատնտեսության ապահովագրության պրոդուկտների համար ՀՀ կառավարության կողմից սուբսիդիաների տրամադրման գործընթացը և պայմանները, ընդ որում՝ սուբսիդիաները տրամադրվում են միայն Գործակալության կողմից մշակված միասնական ստանդարտ պրոդուկտների գծով՝ հաստատված Գործակալության խորհրդի կողմից		
ընդունում է Գործակալության բնականոն գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ կանոններ, ակտեր, որոշումներ և կարգադրություններ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում իր անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության համար պատշաճ պայմաններ, կնքում է պայմանագրեր։ Ընդ որում, վերջիններս պարտադիր են անդամ ապահովագրական ընկերությունների համար		
իրականացնում է շուկայի ուսումնասիրում և ակտուարական հաշվարկներ		
մշակում է իր անդամ ապահովագրական ընկերությունների համար պարտադիր կիրառման ենթակա սակագնային քաղաքականություն		
համագործակցում է այլ պետությունների գյուղատնտեսության ապահովագրության ոլորտը համակարգող մարմինների, փոխհատուցում իրականացնող այլ մարմինների, տեղեկատվական համակարգերի (կենտրոնների) և ապահովագրական ընկերությունների հետ ի		
իր նպատակների իրագործման համար համագործակցում է պետական մարմինների հետ՝ հանդիսանալով միջնորդ իր անդամ ընկերությունների և պետության միջև		
անցկացնում է դասընթացներ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում վնաս գնահատողների համար, իրականացնում է վնասը գնահատողների որակավորում		
հասարակությանը տեղեկատվական աջակցություն է ցուցաբերում գյուղատնտեսության ապահովագրության բնագավառի վերաբերյալ, կազմակերպում է հանրակրթական միջոցառումներ		
սույն կետով սահմանված նպատակներին հասնելու համար Գործակալության կազմում Օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև Գործակալության կանոններին համապատասխան ստեղծում և վարում է Տեղեկատվական համակարգ		
իրականացնում է գյուղատնտեսության ապահովագրության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ այլ գործունեություններ,		
Իրականացնում է ոլորտի գծով հսկողական բնույթի հարցումներ և ստուգումներ		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		3
4.2 Կամավորների թիվը		0
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		2

Digitally signed by SELIMYAN ZARUHI
6412850678
Date: 2025.05.06 11:37:05 AMT

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագիր	ՀՀ	Համակարգել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրության ոլորտը	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագիր	ՀՀ	Ընթացքի մեջ	Համակարգել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրության ոլորտը	Համակարգել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրության ոլորտը

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	47,992,372
8.2 Գույքը	
Ընդամենը	47,992,372

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	24,807,660	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	24,807,660	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները		47,893,902
10.2 Գույքը		
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		47,893,902

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները		24,709,190
11.2 Գույքը		
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		24,709,190

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____2_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ

"Four A Consulting" CJSC

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

audit accounting advisory assurance

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն»

Հասարակական Կազմակերպության կառավարման մարմիններին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» Հասարակական Կազմակերպության 2024թ. գործունեության հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը՝ այսուհետև Հաշվետվություն:

Մեր կարծիքով, «Գյուղատնտեսությունը Ապահովագրողների Ազգային Գործակալություն» Հասարակական Կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով բոլոր էական առումներով տալիս է դրամական միջոցների մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը 2024թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար "Հասարակական Կազմակերպությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Կարծիքի հիմքը

Աուդիտն անցկացվել է Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար" բաժնում: Աուդիտորն անկախ է Հասարակական Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պարտավոր է պահպանել ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում աուդիտին վերաբերող էթիկայի այլ պահանջները: Աուդիտի ընթացքում ձեռք է բերվել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ կարծիք արտահայտելու համար:

Հաշվետվության համար Կազմակերպության Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Կազմակերպության ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, դրամական միջոցների մուտքի և ելքի օրինականությունը, և օգտագործման գործընթացները:

Կազմակերպության Ղեկավարությունը պատասխանատու է նշված հաշվետվությունը կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է սխալի կամ խարդախության հետևանքով առաջացած էական

խեղաթյուրումներից զերծ հաշվետվություն կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանումը, կիրառումը և պահպանումը:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Կազմակերպության Հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ ՝ էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

16 ապրիլի 2025թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/Աուդիտի ղեկավար

ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
YEREVAN CLOSED JOINT STOCK COMPANY
«ՉՈՐ ԷՅ ԲԱՅԼԹԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 06.05.2025 11:33